



1843-1894

Հ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Ղ Ի Ւ Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ ԾԲ

Մ Ա Ր Տ

Հ Ի Ն Հ Ա Ի Ա Տ Ք Հ Ա Յ Ո Ց

Գ Լ Ո Ի Խ Գ .

ԲՆԱԳՈՒՅԵՏՈՒԹԻՒՆ . - Ա . ԱԲԻԻՆԻ ԵՒ ՔԱՐԻՆԻ . - Բ . ԿԲԱՆ

(ՏԻՄ ԵՂ 49)

Ճամբարաւթեան ուղիղ ճամբէն խոտորոզն՝
 պլեւայլ կողմ կրնայ երթալ և կ'երթայ, և
 դիմացն ինչ ելնէ՝ անոր համեմատ այլ կր-
 նայ նորանոր խոտորիչ . աւելորդ է ուրեմն հար-
 ցընել, թէ այս կամ այն ազգ՝ շիտակ ճամբան
 թողած՝ նախ ո՞ր ծուռը զացեր է: Սակայն
 թէ՛ հին և թէ՛ զեր մնացեալ բարբարոսաց մէջ
 կ'երեւի՝ թէ յառաջ քան զանձնաւոր էակս և ի-
 րենց նմանս կամ աննմանս, անկենդան բնու-
 թեան մասանց հաւատք և պաշտօն ընծայեր են .
 որ՝ թէ և թանձր մտաց բերմունք է, այլ ա-
 ւաղելի զարմանք մ'է՝ որ նա և մեր լուսաւոր
 ժամանակի շատգէտք և կարծեցեալ իմաստ-
 նոց ոչ սակաւք, գրեթէ կերպով մի բնա-
 պաշտք կամ նվթահաւատք են, երբ չեն
 ընդունիր ըստ Ս . Փրոց աւանդութեան՝ աշ-
 խարհիս և մարդու ստեղծումը . և որչափ այլ
 խորշին այսպիսի անունէ, և թէ ոչ կրօնք ոչ
 պաշտօն՝ սակայն կերպով մի հաւատք մասու-
 ցանեն բնութեան . այս տարբերութեամբ՝ որ
 ասոնք իբր թէ բնութիւնը բարակցընելով՝ ի-
 րենց նօսը հետեւանաց կու հասնին, մինչդեռ
 հինք՝ բնութեան մեծութիւնը . միանգամայն
 թանձրութեամբ ըմբռնէին: Եւ հարկ էր այս-

պէս ըլլալ . նախ, քանի որ բնութեան զաղա-
 նիքն քիչ ճանչցուած էր . և երկրորդ, որ նախ-
 նական աստուածաշուտութիւնն այլ՝ այսինքն
 Պաշտօնն՝ մասամբ ի բնութեան կատարուէր .
 երբ ոչ տաճարք ոչ մեհեանք և ոչ պլեւայլ
 զործիք պաշտամանց հնարուած էին, երբ երկ-
 րին որ և է մտան՝ էր յատակ պաշտօնի և աղօ-
 թից տեղւոյն, երկինքն՝ անոր համապարփակ
 ձեղուն, ճիւղատարած ծառ մի՝ հովանի, կոշտ
 ժայռ մի՝ սեղան, և բուսական՝ երբեմն և կեն-
 դանական արարածք՝ նուէրք և զո՛ւ Ս . յն ա-
 տեն այդ անչափ ձեղուան արեգակնափայլ պայ-
 ժառութիւնն կամ աստեղզագարգ ցոյցումունքն,
 երկրիս բիւրակերպ տեսարանքն, իր բարձրու-
 թեամբք (լեռանց), խորութեամբք (ձորոց) և հար-
 թութեամբք (զաշտաց), ասոնց ծաղկածիծաղ և
 կանաչապարզ երեւոյն, բուսոց և սընկոց սուած
 զուարճութիւնն և վայելքն, յաղթահասակ
 ծառոց աշտարակածե զետնի երեսէն վերա-
 նայն, անոնցմէ անհամեմատ բարձր լեռանց
 կոճածե կամ խոժոռ երեւոյթքն, մանաւանդ՝
 զեռ այն աստե անոնց ներքին հնոցին վառ
 ըլլալով՝ հրաբուլիս ժայթմունքն, որոսամբք և
 ստատիկ սատունութեամբք, նոյնպէս և ջրոց

տեղ տեղ ծովածաւալ տարածմունքն, տեղ տեղ հանդարտ ընթացքն, տեղ տեղ այլ անընդհատ և անհասանում շտաբեցուցիչ շատաշամբ վիժել սահիլ թաւայիւն՝ բրբզանման փրփուրներով. ստոնք և այսպիսիք՝ զմայլմամբ, ափշութեամբ, վախով և պատկուտանօք՝ ողջխտն մարդկան միաբնն այլ սիրան այլ առ Աստուած վերացընելին, զնա ճանչնալով տիեզերաց այլ իրենց այլ ստեղծող և տնօրէն. և բնութեան անխօս լեզուին հետ ձայնակցելին զնա օրհնելու, զնա պաշտելու :

Իսկ երբ՝ և որոց կիրք, ախար, հակառակութիւնք, բռնութիւնք՝ ապականեցին զբարս, և հանդերձ ծուլութեամբ անփութեամբ մթնցուցին զվիտս, պաղեցուցին զսիրտս, մարդ՝ որ երբեմն զԱստուած միայն իրմէ վեր և զինքն այլ բնութեանէ վեր զիսէր, նուաստացաւ քան զբնութիւն. փոխանակ անկէ աստուածազոյցիկ զեղեցկութիւն, վնասութիւն, ջերմութիւն մի զպալու, սկսաւ մէկ կողմէ երկիւղ մի զպալ, միւս կողմէ իր կենաց աստուտան անկէ ճարեւուն պատճառաւ. քիչ շատ պատկառիլ պատուել պաշտել ինչ որ իրեն օգտաւ կամ վախ կամ զարմացք պատճառէր. և փոխանակ միոյն Աստուծոյ վերբնծայելու իր հաւատքը, այլայլութեամբ կրիցն այլայլելով և կրօնքը, նախ իբրև Աստուծոյ զգալի պատկերք՝ յետոյ աստուածային իմն, և ապա (ոմանք) միշտե աստուածս համարեցան այն արարածները. և այսպէս խանգար սիրտ և ախմար միաք՝ մտուցին կամ ընդունեցան զվեհապաշտութիւն, որ կ'ըսուի և Նիշրապաշտութիւն և Տարրապաշտութիւն :

Յայս և յիմացութեանէ՝ որ երկու գլխաւոր կիրք են շարժառիթը կրօնից, Սէր և Վախ. ինչպէս և հիմայ այլ ճշմարիտ կրօնից հետեւողքը կոչեմք աստուածասէր և աստուածախախ կամ երկիւղած. ուղիղ կրօնից առաջին սարքն է և պէտք է ըլլայ Սէր. մկրտութեանն՝ նախագաս երեւի վախն. և ինչպէս սղապոց վրայ աւելի զօրաւոր երեւի այս կիրքս, որք որ և է այլանդակ կամ մեծ բանէ վախեն, այսպէս այդ փոքրամիտ մարդիկն՝ իրենց բոլորախիբը զըստուած բնութեան մեծամեծ և ուժով մասերն կամ արարածք՝ վախ ազգելով՝ պատկառելի և պաշտելի եղած են : — Առանց հետու երթա-

լու, երեւակայնք մեր հին Հայկազունն Երասխայ դաշտին վրայ, զէպ յարեւելք դարձած, անկէց՝ իր ձախ կողմէն 10,000 ոտք վերացած լեռան մի զիմաց, ալ կողմէն 13,000, (խկապէս 16,000՝ յերեսաց ծովու), որոց մէկն Արագած կոչեցին իր նահապետն, միւսը Մասիք, ասոր իբր յանկարծօրէն տափօրակ գետնէն այնքան և զրեթէ աննման և անհամեմատ քան զամենայն լեռինս վերամբառանալն, ինչուան այսոր այլ զամէնքն՝ թէ սղես թէ գիտուն, ասիացին այլ եւրոպացիքն այլ հիացընէ, ո՛ր և է կրօնքի այլ հետեւող ըլլայ. ի՞նչ պիտի զգար, ի՞նչ պիտի ընէր այդ Հայկազն՝ քանի մի սերունդ յետնածին քան զՀայկն, այդ երկու լեռանց միջոց կանգնած. մանաւանդ երբ (ինչպէս կարծուի), ամէկ 3-4000 ասորի առաջ, պեռ միայն անշարժ ճերմակ չէին անոնց զապաթունքն, այլ վերէն կամ կողերէն՝ շարժուն կարմիր այլ կ'երեւար կու փայլիլըլէր, զոնէ ծուխի կամ ընդհատ բոցի ձեւով, և երբեմն երբեմն կ'որոտար կու հառայէր հրեղէն շունչ չերով : — Միթէ հնագոյն նահապետաց աստեւաւելի ստեպ և սաստիկ չէին այս հարբըլիտայ ներգործութիւնք և երեւոյթքը Այտ. բայց անոնք ճանչնային զԱստուած՝ ներգործի ի ձեռն բընութեան. իսկ զա՛ զբնութիւն ինքն ներգործող. կամ առանց առաջին պատճառը քննելու՝ ասոր կ'ընծայէր իր վախն այլ իր պատկառանքն այլ. և այսպէս բնապաշտ՝ և մասնաւորելով՝ Լեւեհապաշտ կ'ըլլար. ինչպէս զրեթէ ամենայն հին ազգաց մէջ հատարակ է այս և միշտե հիմայ թէ ոչ պաշտօն և ոչ հաւատք՝ այլ պատկառանքը կը զգայ մարդ այդպիսի երկրանիւթ հսկայից առջեւ : — Եստեղու զըստուածեան ողջամիտ Հայն փոխուի ի մարարանդ, և՛ թէ ոչ անաստուած՝ ըստ բոլոր ի մաստի բառիս՝ այլ թիւրաստուած : — Այս ցաւալի բանին և ամաչելի՛ զիրաւ կու համուզուիք՝ անտարակուսելի Ս. Գրոց պատմութեամբ աստուածընտիր Հրէական ազգին. յեղիպտոսէ ելնն ինչուան իրենց գերութիւնն և ինքնամարտութիւնն ի կորուստնն, հազար և աւելի մանց միջոց, ստեպ կու սեանենք անոնց մէկ մի ի կոպապաշտութիւն յարիւն, մէկ մի զառնալն առ Աստուած, յետոյ դարձեալ և

չուտով՝ իրենց շրջապատ ազգաց անշնորհք պաշտամանց, Զգարմանանք՝ եթէ մեր նախնիքն այլ — որ ոչ միայն այլեւայլ ազգօրք և կրօնիւք շրջապատեալ էին, այլ և իրենց լիճանաւ կանութեան ոգով՝ մանկէն և ելնէին մօա և հեռուոր ազգաց մէջ, — այլեւայլ կրօնից պաշտամունքն այլ ընդունած են, թէ և ոչ ամենքն ամէն կողմ երկրին :

Հարկ համարեցանք ի սկզբան այս խորհրդածութիւնս ընել, որպէս զի յետոյ յիշելի այլեւայլ տեսակ հաւատաց պատճառն և մուտքը նարկ շրջայ մեներ քննել կամ կրկնել : Գառնանք հիմայ ուր որ թողիք մեր հին բնապաշտ Հայն՝ իր լերանց առջև. բայց այս այլ յիշենք որ թէ և միով անուամբ կոչուին այս կամ այն հաւատք և պաշտօնք, սակայն ամեն ազգ նոյն կերպով և պարագայիք չէր հաւատար. այլ ինչպէս հիմայ թէ քրիստոնէութեան թէ օտար կրօնից մէջ զանազան ազանոգք, դաւանանք և ձեռք կան, այնպէս և հին ազգաց մէջ :

Ա. ԼԵՐԻՆՔ ԵՒ ՔԱՐԻՆՔ. — Եւ զի նախ Լերանց վրայ եկաւ մեր խօսքն՝ յառաջ առանելով յիշենք և զայս. որ Հայն ոչ թէ Մասեաց և Արսպածի սեպեղով միայն զրգուէր, այլ իր երկրին, եթէ կըրնայ ըսուիլ, անթիւ լերանց սեպքէն. որոց մէջ՝ նոր քննութիւնք յայանեցին շատ շիջեալ և գեռ ոչ իսպառ շիջեալ հրաբույիտեր, մանաւանդ վերայիշեալ լերանց երկու կողմի (հիւս. և հարաւ.) երկու մեծ լճերու կամ ծովակներու եզերքը. Գեղամայ (Սեւանայ) ծոցն գրեթէ ամէն կողմէ պատուած է այդպիսի ցամքած հրաբաժակ լեռներով. Բզնունեաց կամ Ալթամարայ (Վանայ) ծոցն իր մօտ և քիչ հեռի ունի Գրգուռն ու Նեբրովիթն (Նամրուս), և մեծաբոյն և գեռ անհանդարտ թորակն (Թանսուրիկ Պայազիտայ) և բարձրագագաթ երկրորդ Մասիքն (Սիփան կամ Սուպան) լեռ, գրեթէ կից ծովեզերքին հիւս. արեւմտեան կողմէ : — Վերայիշեալ պատճառներէն զատ կամ աւելի՝ Արարատեան բարձր Մասիս ինչպէս բարձրութեամբն գերազանցէ քան զամենայն լերինս Հայոց, գերազանցէ թերեւս և քան զամենայն լերինս երկրի՝ յիշատակաւ Զրհեղեղին և Նոյեան ապաւինին և անոր հետեւանաց. որչափ այլ աւելի

կամ պակտ հաւանական՝ և ոչ իսկ ստոյգ ըլլար այս կարծիքս, ոչ միայն հին ատեն այլ և հիմայ այնքան դժուար է զայն ջնջել և մոռնալ, որքան հնար է Մասեաց ձիւնեղէն կտտարը վար ստնուլ կամ ձգել իր անհղ կատառուածին մէջ : Եթէ լոկ աւանդութիւն ըլլան Մեթալոլայ հայրապետի փորձն՝ ելնելու է լեռան Արարատայ ի խնդիր մնացորդաց տապանին, կամ Տրդատայ՝ անոր կողերէն շալկելն և բերել ութ վիթխարի քարեր և գնել իր աննման կոռակից կուսին (Հոփսիմեայ) յալթական օսանարին հիմերում, անտարակոյս են քրիստոնէից ուխտագնացութիւնքն ի Մասիս, ոչ միայն բնիկ սեղացեաց, այլ և օտարաց ի հեռի աշխարհաց : Ապա ի՞նչ զարմանք եթէ Մասիս՝ Ազատ անուամբ պատուական և սրբազան նանչուեցաւ ի հին Հայոց. և առասպելեցաւ յիշուց բ Արտաշէս թագաւորին շատ անգամ. յիշատակուած անէժքն առ անդրանիկն (Արտաւազ), եթէ,

« Դու յորս հեծցիս յԱզատի վեր ի Մասիս, »
 « Զքեզ կայցին Քաջք, տարցին յԱզատի վեր ի »
 « Անկ կացցես, և զլոյս մի՛ սեւցես » : [Մասիս. Յայտնի է ամենայն ազգային պատմութիւն ուսանողաց այլ՝ անիծից (կարծեցեալ) հետեւանքն. Արտաւազայ ձիւն ուրի երթալով դէպ ի վեր ի Մասիս՝ յանկարծ զարհուրիլ և բնկնիլն ձիւն և որսորդութեան կազմածոցն և բարակ շունքերով ի յանդուհոս վրհին, հոն կապուիլն ի Քաջաց՝ երկաթի շղթայիք, զոր ի զուր լզելով և լզուըտեղով ջանան սիրաւէր շունքն՝ մաշեցընել, կոտորել և ազատել առանց մեռնելու մշտասանից կապուած թագաւոր, որ սպառնայ թէ ելնէ՝ զաշխարհս ամէն աւերել. բայց ընկերասէր զարբիւք սալերինի բազխելով՝ ամեն տարւոյ վերջ՝ նորէն նորէն ամբացընեն հաստացընեն շղթաները : — Մասիս Ազատ և Բարձր յատկանիչ անուններէն զատ՝ ունի և Մրիե կոչումն, զոր համարիմ՝ նոյնպէս ի հին առասպել աւանդութեանց մնացեալ : Յիշուած է ուրիշ սեղ, որ Պլուտարքոս պատմիչն՝ Երասիսայ մօտ դիւցական լեռ մի յիշէ Տիորփոս

1. Ետտ այլանդակ առասպել է Պլուտարքոսի յիշածն, իբր թէ, Միհր շատուած տեսնելով որ շեն ուզեր իրեն կին տալ, քարէ մի կու

անուամբ, որ յունարէն նշանակէ Մթաթա-
փանց, եթէ անունն այլ ի հայկական տարփ
կամ տարափ բառերէն ծագած է :

Թէ յատուկ պաշտօն կամ պատիւ մ'այլ
ընծայուէր Մասեաց, կամ որ և է կերպով
որբազանեալ և զիւցազնացեալ էր ի Հայկա-
զանց, հաւանական երեւի. մանաւանդ եթէ
ստոյգ են անուանք աւուրց ամոց, որոց՝ ըստ
Պարսից և այլոց ոմանց ազգաց՝ իւրաքանչիւրն
նուիրեալ էր մի մի զիւցազին կամ զից, և ի
պաշտպանութիւն նոցա. այդ անուանց մէջ
կան և անուանք լեբանց Հայոց, Մասիս, Ա-
րագած, Վարագ, Կորդիս, Գրգոս, Պար-
խար, Նպատ, Մաեի (զոր լաւ եւս կոչելի էր
Սեպուհ)։ — Եթէ ի Մեծ Հայս ըլլային նո-
րազոյն ժամանակա հայացեալ Կիլիկիոյ քանի
մի լեբինք, Կոնկանատ, Պարզկատ, Պրիտ,
և այլն, գուցէ այս որբազանից կարգում
գրուէին։ — Ինչ որ ստոյգ աստուածային կա-
նօք Սինա լեռն հրով ծխով վառուած ազգեց
Հրէից՝ Մովսիսի միջնորդութեամբ, անոնց օ-
րէնք և պատախարհն տրուած աստին, կրնար
նման իմն ազգել որ և է հրաբուգի լեռ սե-
ղացեաց, մանաւանդ ի սկզբանն. և կրակին
նուազմանէն վերջ մնային առաջին յիշատակք-
մանաւանդ որ հրաբուգի սաստուածեանց ըրած
ներգործութիւնն լեբանց վրայ՝ յիրաւի անար-
կու և ասուք կերպարանք թողուն, յիհերով,
պատասուածքներով, մեծամեծ քարանց կոչ-
կոռներով, և անոնց ներսէն կամ խորէն փըս-
խած պէսպէս և զոյն զոյն նիւթերով, ինչպէս
ինչուան հիմայ կ'երեւին՝ ուր որ այսպիսի լե-
բինք կան։ Այլ աւելի կ'ըլլար ան ու սոս-
կումն՝ եթէ խաբեբայից, սուս պաշտօնից,
գուցէ և զիսկան հնարք այլ խառնուէին բը-
նութեան ներգործութեանց։

Այսպիսի խառն բնական և անընական իրք
և կիրք զուակեղ տան Վանայ երկրին հա-
րաւային արեւմտեան կողմերում՝ ի սկզբան
քրիստոնէական զարու յիշուած, յառաքելու-
թեան Ս. Բարդղղիմեայ, Անձեւացեաց գա-
ւառին (որ արդէն վար ու փոր երկիր մի նշա-

նակէ), Կանգուար և Աղուաւի քար կուռած
լեբանց միջոցն. ուր որ յատուկ ֆար կամ
ֆարայր մի կայր, և հօս՝ ըստ աւանդոյնն՝
« Գերբ բագում, (ընեմք և զիւսխարք), բնա-
» կեալ էին ի ֆարն յայն, և պատրէին զմար-
» զիկ սեղուչն. տունեալ յայնմ սեղուղէ զեզր
» աստականս. կասեւանայն դարբնաց, անա-
» ւոր հրաշիւք և զարհուրանօք գործէին. յորս՝
» մարդիկ աշխարհին սովորեալք՝ անզ առ
» ֆարայրին (կամ ֆարայրեմ) զեղբէրէն...
» անուանեալ զանուն սեղուչն այնորիկ Գարբ-
» նաց-քար։ Հասեալ Ս. Առաքեալն՝ հալա-
» ծեաց զգարբինսն՝ զգործօնեայս չարին, և
» զկուտն փշեաց՝ որ յանուն Անասայ էր » :
Անահիտ՝ յեա ժամանակի հրաւիրուած է այս
սեղ ի խաբեբայից. բուն պաշտելի կամ վախ-
նայիկ եղած է խարդակ պարբնաց կանանձայ-
նութիւնն, և այն ֆարայր կամ ֆուրայն՝ որ
նշանակէ և հայոց զարբնաց և հանքերու
կամ քարերու խոր սեղուննք և խորէն հա-
նած նիւթեր։ — Այսոր նման էր և քիչ հե-
ռու Բոք կուռած լեռնակողմն, ուր թէ Կրակ
թէ Ջոռ թէ կուռք պաշտուէին, և կային վի-
շապարնակ ֆարայրք, ուսկից զիւսխարքն և
զիւսխարք՝ « Ահագին իմն և սեխիս և փայ-
» լիսն, ձայնս և թնդմունս և նայթմունս գոր-
» ծէին » . զորս նոյնպէս լռեցուց Ս. Առաքեալն.
և անոնց սեղ, ըստ հին աւանդութեան ազգի,
Տիրամօր անձեւագործ Պատկերը դրաւ, և նոր
հաւատացեալ կոյսեր կարգեց ի պահպանութիւն
սեղուչն. զորս կրկին հաստատեց Ս. Լուսա-
ւորիչն, և եղաւ սեղին մեծ ուխտատեղի, և է
մինչև հիմայ, թէ և շատ անջացեալ։

Յիշատակներէս յայտնի գուշակուի՝ որ ի
լեբանց մասնական պաշտօն կամ պատկառանք
մի ծագած էր ի ֆարայրս և ի ֆարդինս, յետ-
նոցս՝ կամ մեծութեան կամ այլանդակ ձեւաց
համար. և այս ուրիշ շատ ազգաց մէջ կ'երեւի,
— ոչ միայն նրբամիտ Յոյներն այլ մէկտեղ առ-
նըլով, իրենց պատգամախօս փոսերով և վիհե-
րով և երկընդէ բնկած քարերով, նոյնպէս
Կելտաց, Բոնեաց և Սաքսոնաց ծանօթ
Տոլմեն (Dolmen), Մէնհիր (Menhir), Իր-
մենսուլ կամ Հերմենսուլ (Hermensul) քա-
րերով և քարաստուածներով, — այլ և աստուած-
ընտիր Եբրայեցի նահապետաց մէջ, որք թէ

ծնանի զՊորփոս. սա յանդգնութեամբ Արէոի
հետ կուռել յանդգնելով կու սպաննուի և քա-
րայեռ մի կ'ըլլայ։

և պարզ յիշատակի համար մեծ քար կամ քա-
րեր կանգնէին . ինչպէս Յակովբ և Լաբան ի-
րենց դաշանց վկայութեան համար¹, սակայն
Բեթ-էլ կոչուեցան այնպիսի տեղիք, որ նշա-
նակէ Տօն Աստուծոյ, որոյ տեղ յետոյ տա-
նաբը շինուեցան և կոչեցան . — Ս . Լուսա-
տորիչ ի վարդապետելն առ նորապարծ Հայս ,
բոտ Ազգականգելի պատմութեան՝ անոնց հայ-
րերը ֆարապաշտ կոչէ . որ կրնայ իմացուիլ
թէ վերոյիշեալ պաշտամանց համար , թէ
քարէ շինուած պատկերաց կամ կոտց : —
կրկին անգամ վերոյիշեալ վանայ ուրոսն՝ որ
Հայոց երկրի զեցաբանական մէկ գլխաւոր
կենդրոն մ'է , ունի իր նոյնպիսի ֆարերն
այլ , ինչպէս Ալիքարին և այլք . անոնց մօտերն՝
բոտ հին աւանդութեանց՝ Շամիրամ իր գար-
մանալիքը գործեց և անոնց մօտ սպանուեցաւ .
և ի՞նչ եղաւ , որ յետ զմահն յիշելու՝ մեր պատ-
մահայրն (Խորենացի) կ'ըտէ , թէ կ'ուզես հա-
ւատալ , ահա « Եւ Շամիրամ » ֆար առաջին
քան զՆիորէ ² » :

Բ. ԿՐԱՎ . — Որ և է պատճառաւ ԸԼ-
լայ՝ զրեթէ ամէն հեթանոսաց մէջ քիչ շատ
մտած է կրակի պաշտօնն , ոմանց իրրեւ յա-
տուկ և գլխաւոր հաւատք , ինչպէս մեր պատ-
մութեան մէջ շատ ծանօթ Սասանեան Պար-
սից , — որք Լանային և յետ լուսաւորութեան
Հայոց քրիստոնէութեամբ՝ խափանել զայս ,
և նորէն մնցընել զայն , — սմանց այլ էրբեւ
մի ի շատ շատուածոց և պաշտելեաց : Այս

1 . « Առեպ Յակոբայ վէմ՝ կանգնուաց ար-
» ձան , և առէ ցեղերսն իւր . Կուտեցէք քա-
» րինս . և կուտեցին քարինս , և արարին բը-
» լուր . և կոչեաց զնա Լաբան՝ կարկառ զը-
» կայութեան , և Յակոբ կոչեաց զնա կարկառ
» վկայ . . . Եւ առէ Լաբան . Ահա կարկառս այս
» և ահա Արձանս՝ զոր հաստատեցաք ընդ իս
» և ընդ քեզ , եղիցի քեզ վկայ կարկառս և
» վկայ արձանս » , և այլն . Ծնեդ . Գլխ . ԱԱ 45 :

2 . Կիորէի առասպելն ծանօթ է , կին էր
Աբիխոնի , և եօթն մանչ եօթն աղիկ ծնանե-
լով՝ կու պարծէր . նախանձոտն Լատոնս սի-
րեցեալն յԱրամազդայ՝ սպաննել աուա զու-
կընները , զմայրն . այլ փոխարկեց յապառած .
որ թէ և քարացեալ՝ չէր զադրեր արասունք
բղխել զուակացը վրայ :

յետին կերպով էր կրակի պաշտօնն ի Հայս .
այսինքն՝ աւելի տեղական՝ մասնաւոր կող-
մանց պաշտօն քան ընդհանուր . որոյ կեն-
դրոնն և սկիզբն հարկ է խնդրել նախայիշեալ
հրաբուլի պատագ և լեբանց մէջ և վրայ . և
ոչ միայն ասոնց (լեբանց) պաշտաման մէկ
պատճառ , ինչպէս ըսինք քիչ մի առաջ ,
հրաբուլիքն էին , այլ թուի և գլխաւոր
պատճառ . որով կանխէ կրակի պաշտօնն քան
զինքը ծածուկ ի խորս պահող և յանկարծ
տեղէ մի դուրս հանողն : — կրակի սյրող
բնութեան կից լուսափայլութիւնն այլ ի հար-
կէ զբող և մեծ զբող էր պաշտաման .
եթէ մեծաբնակաց՝ հրաբուլին իր սաստիկ
ներգործութեամբք ահուզող կ'ազգէր և անով
պատկառանք և պաշտօն , սակաւ վախով՝ այլ
աւելի հանգարտ զարմացմամբ՝ զնոյն կ'ազգէր
հեռաբնակաց , որք ի գիշերի՝ իրենց անձանօթ
լեբանց զագաթում գերազայն քան զամենայն
մոզական լապտերս՝ վառուած մեծ և ցոլցուուն
ջահեր և լամպարներ տեսնէին . և երբեմն՝
այն բնութեան գաղթած և լած ժամերուն՝
զետնի սակնն սողացող որոտմունքներ . եթէ
կրակն կու վախցընէր մօտեցողը , լոյսն կու
զուարճացընէր տեսողը , և երկնից լուսաւորաց
աղօտ ազգակցութիւն մի ցուցընէր : Եթէ ու-
տոնց պաշտօնն կանխեր և ոմանց սողաց մէջ ,
և լոյք յերկնից յերկիր իջուցեր է , կըրնամք
կարծել թէ թերեւ Հայք՝ յերկրէ յերկինս
հանած ըլլան զայն պաշտօնն :

Ասով հաւանելի է որ շատ այլ հին ըլլայ
կրակի պաշտօնն ի Հայս՝ քան Չրադեղնական
կրօնից և վճռամկան կոչուած հուրն . և ի-
րարմէ արարէր սկզբամբ կամ իմացմամբ կրա-
կապաշտ եղած ըլլան ֆանանացիք և այլ Սեմա-
կանք , տարբեր Պարսք և Մարք , նոյնպէս և
աւելի բարակ ազգեր Յոյնք և Լատինք : Մեր
հին հարց զազգափարն կամ զգագմունքն՝ վերի
բաժաներէս յայնտիս . և զի տեղական բուսե-
ցաւ կրակի պաշտօնն ի Հայս , մնայ ակնարկել
այն սեզեաց : — Ասոնց գլխաւորն բոտ աւան-
դողաց քրիստոնէական կրօնից առաջին քարո-
զութեան ի Հայս , վերոյիշեալ Ալլթամարայ ծա-
վատաշարին բոլորախըն եղած է , մանաւանց ի
հարաւակողմն , ուր տեսանք յԱնձեւացիս ըզ-
Դարդեաց քարն և գեռար . թէպէտ առաջինին

մէջ կրակի նիւթ կամ բղիւմ չի յիշուիր, բայց դարձնաց կտանահարոտրոտիւնն գուշակել տայ, թէ զոնէ առաջ այն այլ կ'երեւէր և լըսուէր, և երբ զպղծեցաւ հրաբուլդին՝ խաբերայ պայտօնեայք և մոզք տեղւոյն՝ իրենց քրանքով և սաշերով ու կռանով կու ստեղծէին՝ թէ ոչ հրաբուլդն՝ այլ հրացայտ կրակեաղ: Իսկ Քոչը՝ զեռ ի սկզբան քրիստոնէական զարու այլ բարոյութիւն մարած չէր, էթէ և զլուին հանգչած էր և չէր ծիւեր սիւնածեւ ի վեր, բայց մէկ կողին վրայ պատառած կամ բաժակ մի կայր, (որ զուցէ երկրագլտ աչքով զըննողի մի երեւի մինչեւ այսօր), և հօն էր բոտ պատուի քարոզութեան Բարդղիմեայ առաքելոյ և հրաշագործ Պատկերի Տիրամօրն (Անձեւացեաց կամ Հոգւոց վանաց), « Տոն կրա » կի, անչագ հրոյ, անդազար այրանակ աստուածոցն »: որ նշանակէ՝ թէ միշտ վրտ էր տեղի ի բնէ, բայց թուի թէ և զըսէն նիւթ կ'անելցընէին կրակի աստուածութեան կամ պաշտելոյն անյագութեանը. և այսու յայտ է՝ որ լոկ պատկառանք մի չէր այն տեղւոյն բնծայուած, այլ և աստուածական կարծիք և հաստեղ մի. տարբեր Պարսից Օման կամ Աման կոչուածէն, որոյ պաշտաման ականատեսն Ստրաբոնի է կապպաղովկիս՝ կու ստորագրէ (ԺԵԳ), նոյնպէս և Պելլասգեանց կամ ուրիշներու պաշտածէն. վասն զի կ'ըսէ պատմիչն, թէ « վառէին զկրակն՝ Քոչոյն, և զԱլլիքիւրն՝ Եղբայրն »: Այս խօսքս և վերը աստուած կու չեն՝ յայտնէ, նախ, որ ոչ միայն զբոցն կամ զնիւթ կրակին պաշտէին, այլ և անոր մարդակերպ պատկեր մի. և երկրորդ, այս պատկերն իզական էր, պարկեղծութիւն Քոչը անուանուած, նա ևս փիլիսոփայօրէն՝ քոյր Ջոյո. թէ և գիտենք որ այս երկու տարբեր իրարու հակառակ են, և թէ ուզեն իրարու համբոյր տալ, պայծառափայլ քոյրն ցրտաշոշափ եղբոր շրթանց մէջ կու մարի: Կրակին հօր բնութեանն՝ թուի թէ վայելէր արական կերպարանք ունենալ՝ ինչպէս Միհր աստուածն Պարսից. բայց Հայք անոր զգալի զօրութեանն անելի՝ զեղեցկութեան ծածուկ և յաղթող զօրութիւնը նկատեր են ի նմա. միանգամայն և սաստիկ տարփածուաց նման իրարմէ անբաժան կենօք և մասնուամբ. վասն զի եթէ քոյրն այն մեռնէր ի

զրկել եղբորն, իր մարած մնացուածն անգամ պաշտելի էր. որովհետեւ իր մեխիւր ոչ յօսեցնպէն, կամ Պարսից պէս ի Մոխրաւոցս ամբարէին, այլ՝ « աստուածացուցեալ զոյով ի » Սիւս Քարին՝ հոռէին յակն յորպարուիս » Ալլիքն՝ որ բղիւ յոսս լերանցն, որ է » յառաջ խորալիւսին... Եւ զի անէին զկրակն » Քոչը, և զԱլլիքն՝ Եղբայր, յերկիր ոչ ար » կանէին զմոխիրն, այլ արտասուօք եղբորն » ջնջէին »: Գեղեցիկ և բանաստեղծական զրոյց, զուցէ և հին քերթողական և վիպասանական երգոց կրակապաշտ մոզի կամ քուրմի մի յիշատակ. որպիսի կըրնար ըլլալ նոյն իսկ քրմայեան տեղւոյս՝ Քոչը, որոյ անուամբ՝ բոտ պատմութեանն՝ կոչուած էր և լեռն »:

Այսպիսի մանրամասն կամ բոլորական պատմամբ համար՝ յարմարօրէն մեր քրիստոնեայ գրիչը այլ (որպէ՛ս Ագթթանգեղոս) փոխանակ կրակապաշտի համար հրապաշտի՝ Մոխրապաշտ կոչն իրենց բարբարոս հայերը, և « Մոխրապաշտոտրոտիւն նախնեաց մերոց », ինչպէս կ'ըսէ պերճախօս վարդապետն Անանիա ի ներբողի խօսչին, թէ միացընելով և թէ կերպով մի զատելով մերայոց հրապաշտութիւնը՝ յօտարաց. « Կործանիլ կուպաշտ տաճարացն, » Մոխրապաշտ և մոխրալից ատրոտաշանացն » սովորութեանց, զանց աննելով զՈրմզգա » կան և զՎոսմական հրապաշտութեանցն » հոգեկորուստ ստորմանցն հրակիզութեանց, » զոր ի մերում Հայաստանեայց սպինս »: Հօս չեմք ուզեր այս վերջի զրաղեշտական աստուածութեանց վրայ խօսիլ, վասն զի այն ուրիշ հաստեղ էր, ինչպէս վերն այլ յիշեցնք, և յետոյ անելի պիտի յիշեմք:

Ինչ տեսակ պաշտն, հանդէս և նուէրք կ'ընծայուէին կրակի Եղբոր. — ստորապրուած չեն. բայց գուշակուի քիչ մի. և նախ, պաշտածնից խարախութիւնն, որք կրակի վառանաց, բազնաց և պատկերաց մօտերը պահուած՝ « անգլին իմն տեսիլս և փայլիւնս, տին Բութ կարգայր »:

1. Այսպէս գրուած է Տիրամօր Պատկերի պատմութեան ընտիր սրինակի մի մէջ, որ մեր սոցազրածէն (յամի 1866) անելի ճոխարան է: « Ար տեղին Բութ լսի. քանզի անուն քրմայեան տին Բութ կարգայր »:

« ևայնս և թնդմունս և կայթմունս գործելինս :
 Երկրորդ , այս ահարկու սարսափն անեցընելու
 համար՝ ուրիշ վախ ձգող պաշտամունք այլ բե-
 րած և դրած էին այն տեղ . ինչպէս , օձեր և
 վիշապներ , զորս յետոյ պիտի յիշեմք . և աւելի
 շար՝ իրենց շահու յարմար նուերքներէն զաս-
 անենէն անյարմարն այլ ընել կու տային , այս-
 ինքն և Մարդագոհն . և իրենք՝ ինչպէս Դարբ-
 նաց քար տեղւոյն դիւաց և գիւարախից հա-
 մար ըսուած է՝ կու զուարճանային խարտողաց
 խեղճութեան , վախուն և մահուան վրայ՝ : —
 Վերոյիշեալ վարդապետն Անանիա իր ճառին
 մէջ կ'ըսէ եւս . ● զոր ի մերում Հայաստա-
 » նեայց ազինս՝ Հոռո-բակ անուանեալ բազ-
 » նու » . որով և զատէ առջի բառէն զերկ-
 բորդն (բագինն) , այս ետքինս հաւանօրէն Հայկ-
 ազանց ժամանակէն վերջ մտած է ի Հայս ,
 իսկ Հոռո-բակին՝ իրենց կրակի պաշտաման ա-
 տեն . և ինչպէս կ'ըսուի և բակ լուսնի և ա-
 րեգական , այսպէս երեւի թէ այդ սաշտեցեալ
 կրակի պատկերն այլ բակ մ'ունէր , այսինքն
 ստակ մի , զուցէ ճառագայթաւոր՝ զխուս բոլոր-
 տիքը , ինչպէս կերպարանեն զարեգակն և
 զՄիհր :

Հայկազանց հրապաշտութեան միջնավայրն՝
 Դարբնացբարի և Բութի հետ երրորդ մ'այլ
 ունէր (մեզի ծանօթ) , երկրորդիս արեւմտեան
 հիւսիսային կողմը , Պաղատ լեռ կամ ինչպէս
 ուղղագոյն թուի զըսուած՝ Պաղատ , և աւելի
 եւս նշանաւայն՝ Պաղատոյց . « ուր էին սաս-
 » տիկ յոյժ բազմութիւն դիւաց , զոր ասէին
 » Տուն Արամազդայ և Աստղկան , մեհանք
 » երկու , (ուր) յանուն յանախ պաշտամանցն
 » ասն (կամ տուն) կարգային , որ է Պաղատ .
 » զոր և այժմ մարդիկ աշխարհին՝ վիճեալ ա-
 » տեն . թուիս ի Պաղատայ դիւացն զայ՝ ան-
 » լուր և անխմաց » : — Հեղինակ պաս-

մութեան գալըստեան Ս . Հոսիփոսեանց՝ կ'ըսէ
 ասոնց համար , որ փախտեամբ անստիճոյ ճամ-
 բաներով և լեբանց մէջ թափառելով , հասան
 այս տեղուանքս , և տեսնելով այս պծալի
 պաշտամունքը , « աղօթիւք և արտասուօք ի
 » յերկինս հայեցեալ , առեալ զուրբ Նշանն ,
 » ի վերայ կացեալ Աղբերն . և փախտական
 » եղեալ դիւացն՝ ի բաղինն անկանէին , վայ
 » զվայիւ աղաղակեալ . և ի լեռնէ ի լեռուն ոչ
 » այլ ինչ լսիւր՝ բայց վայ զվայիւ ճշեալ . և ի
 » բանացն փախուցեալք դիւքն անկանէին
 » յերկիրն Մարաց : Էւ զպատկերսն փշրեալ
 » զօրութեամբ Ս . Խաչին , զոր տեսեալ բնա-
 » կիչք զեղն՝ հաւատացին ի Քրիստոս , և
 » մկրտեցան ի ձեռն սուրբ երիցանց նոցա » :
 Կ'աւելցընէ աւանդութիւնն , թէ « Էւ տեղիս
 » այս (Բութայ կողմն) էր Անակայ՝ հօր Սրբոյն
 Գրիգորի » : Սա քիչ սարի վերջը Շնչեց եթէ
 յետ Հոսիփոսեանց մնացած էր հեծանոտական
 բան մի . — Բայց կարծեմ՝ թէ այնքան խոր
 և հզօր արմատացեալ աղանդն , զեռ այլակերպ
 յիշատակ մի լինած է . ծանօթ մինչև հիմայ
 այդ զաւառի և Մովսաց միջոց Բուրիկի Ս .
 Գեորգ անուամբ ուխտատեղի մի բարձր լեբանց
 վրայ . ուր կ'ըսեն , թէ աբղորք ձայնելովն կամ
 լեռելովն՝ կ'իմացընեն թէ կարելի՞ է թէ չէ
 ճամբորդաց անվանանց անցնիլ ձեան միջէն :

Յիշենք հարեանցի՝ որ այս տեղւոյս մօտ լե-
 բանց մէջ էր և Եմաա՝ պաշտամանց տեղի մի ,
 թէ և կրակ չի յիշուիր , այլ « Դիւաց լցեալ
 » պաշտամամբ (որք ի գալըստեան Ս . Հոսիփո-
 » սեանց՝ զարհուրեալ և) զայրագնեալ՝ դի-
 » մէին ի վերայ , իտեղէին ծովին պնչատէին
 » զպաշտօնեայս իւրեանց . որ և անդ առաքե-
 » լանչան քահանայքն (ընկերք Ս . Կոստա-
 » նացն) հայածեալ զնստա և քանդեալ զպաշ-
 » տամունս նոցա , բշչէին զխեղեալսն . վասն
 » որոյ տեղին կոչեցաւ (Եմա կամ Կրձատ) , թէ
 » յայսմ տեղւոյ կնատէին կրճատէին դեքն
 » զմարդիկն . յորում թողու զխաչն իւր Ս .
 » Գայիանէ՝ սեպոյան դիւաց , որ էր Աւազա-

1. Կու յաւելու օրինակ մի . « Էւ մէջ խորածո-
 » րոյն Սէփւք և Կարծօք և լի թուրք մահարբին
 » լցեալ էր . քանզի ժողովեալք աստուածա-
 » ցեալք և դիւացեալք էին , ճղփէին փնշէին ի
 » զուարճունն ողէկորոյս մարդկանն , և շուրջ
 » զմիմեամբ մակաղէին » :

2. Ուրիշ օրինակ մի աւելի շիօթ գրած է .
 « Թուրս ի Պաղատ , դիւաց զլուխ , անուն ան-
 լուր և անխմաց » . իմաստն թուի , թէ՛ այն կող-

մերու մարդիկ իրարու հետ վիճելու ատեն՝ երբ
 իրարու ըսածին չէին համոզուիր՝ մէկն մկայլին
 կ'ըսէր , կարծուի թէ Պաղատայ լեռան դեք
 խելքդ շիօթեր են , գլուխդ բան չի հասլընար :

» կին , որ և զտեղին յետոյ հաստատէ վանս՝
» Սուրբն Գրիգոր » :

Այս յատուկ հրապաշտութեան կեցրոնէն շատ հեռու մեծ կենդրոն մ՝ այլ կար կրակի և կայ , և ամենուն ծանօթ է , մանաւանդ այս ետքի տարիներս . — Բագրի Նաթի հորերն ու հուրերն . — որք երբեմն իրբու առանձին գաւառ մի Փայտակարան աշխարհի՝ Հայոց տէրութեան մասն եղած էին , և կոչուէին Եօթն փոքրակեան բագիւնք . հաւանօրէն եօթն պիտաւոր փորուած տեղ և բազին կար նաթը վառելու և պաշտելու , որոց մէկն յատուկ վառակական հուր կոչուէր , Ազեր Պէկրամ ըստ Պարսից , որք նոյն թուով՝ ուրիշ կողմեր այլ կրակի Արարուաններ ունէին : Իսկ ի բնիկ Այրարատեան աշխարհի մէջ՝ ի Բագրեւանդ գաւառի , ուր Հայոց պիտաւոր պաշտամանց մէկ տեղն էր ի Բաւառան , և Հոռովան Ամենադից (Պանթէոն) տաճարի պէս՝ այլևայլ կրօնից պաշտելիք , տաճարք և բազիւնք կային , մէկ բազինն այլ էր կրակի . երբ յետ սպանման խօսքովու՝ հօր Ս . Տրդատայ՝ կրակապաշտութեան նորոգոյն և անեցընծոյն ի Պարսս՝ Արտաշէր Սասանեան՝ քանի մի տարի տիրեց և Հայոց , բազկաւոր կարծեց զինքն՝ որ այս տեղ գտաւ զայն , և հրամայեց մշտաւլառ պահել « զՀռոբն Որոշրգրական՝ որ ի վերայ բազինն որ ի Բագրաւան » , (Խորեն . Բ . հէ) . հաւանօրէն ուրիշ ատրուշաններ այլ վառել սուտա այս այն կողմ . բայց բէշ տարի վերջ Տրդատ և Ս . Գրիգոր՝ ուրիշ սնտաի պաշտամանց հետ կրակարաններն այլ չնշեցին :

Իբր զար ու կէս ետեւ՝ երբ Աջրակունեաց թագաւորութիւնն վերցուեցաւ ի Հայոց , և Պարսիք նորէն տիրեցին , Յագիւրտի առաջին հոգն եղաւ , իր մեղքերէն զրզուած , կրակապաշտութիւնն արծարծել ի Հայո . սակայն քրիստոնէութիւնն այն ատեն ծաւալեալ և արմատացեալ էր մեր երկրին մէջ . և թէպէտ զբնական վաւր ումանք և ուրացողք՝ որք յանդիմանեցան Լուսաւորչի ծագած լոյսը՝ Զրապէշափ ծխերով ծածկել , սակայն անոր յետին շտաւեղն՝ մեծն Սահակ՝ զեռ նոր հանգչեր էր , կենդանի էին իր հոգեկիր աշակերտքն . յորոց վերջիններէն մէկն Եղիշէ և յետոյ Ղազար փարպեցի՝ մանրամասն սպասմամբ են և հասարա-

կաց ծանօթ է ինչ որ ըրին Հայք՝ եկեղեցական աշխարհական պատերազմական զրով սրով և հոգով . վարդապետ պարագետի և Ղեւոնդի Երիցու արտափայլ արտի կրակներն՝ բազիններն այլ ատրուշաններն այլ կրծանեցին . և ինչպէս այս մեծասիրտ Երիցու զործակից Ս . Սահակ եպիսկոպոս Ռչառունեաց՝ համարձակ պատմեց Գենդապոյ՝ իր ըրածն իր . թեմին մէջ , նոյն իսկ մեղքերը « սակաւիկ մի շարչարելով գանիւ » (ծեծով) նոցին իսկ ետու զկրակն ի ջուրն ըն . » կենուլ . և ասացի այսպէս . Ատուածք որ զեր . » կինս և զերկիր ոչ արարին , կորցցեն ի ներքոյ » երկնից » : Եւ եթէ զեռ տեղ մի վճռամայ կամ Որովզի՝ կայծ մի մոխիր կայր , Ղեւոնդեանց քրիստոսանուէր արինն իսպառ մարեց զայն մուրցուց ամեն ջանքովն և մտմտուքով . զորս՝ յետոյ իրենց մէկ ընկերն և քաջ զրիշ՝ Եղիշի՝ խայտառակեց իր գեղեցիկ զրուածովն Ընդդէմ քէշիկ Պարսից : Փոխանակ շատուածացեալ կրակին՝ մեր եկեղեցին մանկացեալ Ատուծոյ ի տաճարն զարքստեան յիշատակին (Տեառն ընդառաջ տօնի) , իր սուրբ տաճարի և սրահի մէջ՝ իրբու նոյլ սուրբ սիրոյ՝ կրակի բոց մի ցուցընէ ճշմարիտ հաւատացելոց . — Գուցէ զեռ գտուին մեր երկրին մէջ հին տաճարաց Յնացորդաց հետ՝ կրակի բազնաց ալ , ինչպէս ոչ շատ տարի առաջ Երեւանու կողմերում խարխիս մի վրան փոսածեւ՝ այրպէս կարծեցաւ : — Եւնս աւաններ Մարաց Արդպատականի կողմերն այլ (Սիւլէյմանիէ) պահլաւիկ արձանադիր մի զբնուեցաւ , զոր կարդացին « Հիրպետ Նամրի Արմինի » , և թարգմանեցին Հրապետ Նամրի անմահակեաց Հայոց՝ Զրապէշտական կրօնից պաշտօնէից մէջ այլ ծանօթ է Հերպետ անունն Բայց շատ համարելով այս հրեղէն բնուարդէն բաւական ծանօթ սնահաւատ յիշատակը , ակնարկ մի տաճք իր Ալբեր Եղբօր , անցողաբար նշանակելով այս երկու այլանիշ անուանց համաձայնութիւնը (Աղբիւր և Եղբայր կամ Ալբար) :

Շարայարեյի

1. Աշխարհագրական Օրագիր Լոնս . 1867 . երես , 379 :